Նվիրվում է ԵՊԿ հիմնադրման 100-ամյա հոբելյանին

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՐՄԵՆԱԿԻ ԲԱԲԼՈՅԱՆ

Երաժշտագետ, Արվեստի ինստիտուտի հայցորդ, Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջի և Երևանի Ա. Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի դասախոս
E-mail: armish.a@mail.ru

ԳԵՎՈՐԳ ԱՐՄԵՆՅԱՆԻ ՕՊԵՐԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԸ

XX դարի երկրորդ կեսի Հայ սովետական կոմպոզիտոր, մանկավարժ, Խորհրդային սոցիալիստական հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ, ժողովրդական արտիստ Գևորգ Արմենյանը զգալի հետք է թողել ազգային երաժշտական մշակույթի հարստացման և զարգացման գործում: Շարունակելով պրոֆեսիոնալ և ազգային երաժշտության ավանդույթները՝ կոմպոզիտորը, գծել է իր ուրույն ստեղծագործական ուղին, դրանցում լավագույնս դրսևորելով իր մտածողության անհատական կողմերը: Վառ արտահայտված ազգային հիմքը կազմեց Գ. Արմենյանի երկերի բնորոշ առանձնահատկությունը:

Երաժշտասեր հասարակությանը Գ. Արմենյանը հայտնի է իր ֆլեյտայի և նվագախմբի Կոնցերտով, «Ասք Հայաստանի մասին» կանտատով, օպերաներով, մի շարք երգերով: Նշվածների թվում առանձնակի դեր ունի օպերային արվեստը: Լինելով ընդհամենը երեք օպերայի հեղինակ, նրանցում ընդգրկուն կերպով ներկայացրել է իր ամբողջ մտորումները՝ կապված ժամանակաշրջանի, մարդկային ապրումների, խոհերի, զգացողությունների, խորը գաղափարական ներառումների հետ: Թատրոնն իր ամբողջ երաժշտական և դրամատուրգիական կառույցով միշտ եղել է կոմպոզիտորի գեղարվեստական հետաքրքրությունների կենտրոնում: Տեսնել իրական մարդկանց, դիտարկել նրանց միջև տեղի ունեցող բախումները, կիսել տառապանքը և երջանկությունը կազմել են օպերայի գործող կերպարների հիմքը:

Գևորգ Արմենյանը մանկուց հաղորդակից է եղել երաժշտությանը, կապվել Թիֆլիսի պատանի հանդիսատեսի հայկական թատրոնի հետ: Կոմպոզիտորը հիանալի էր ընկալում երաժշտաթատերական ստեղծագործությունների հիմնական սկզբունքները և պատահական չէ, որ նա սկսեց գրել օպերա, երբ դեռ նոր էր կուտակում պրոֆեսիոնալ երաժշտության իմացությունը:

Կոմպոզիտորը երեք օպերայի հեղինակ է՝ «Մարո» (ըստ՝ Հ. Թումանյանի), «Խաչատուր Աբովյան» և «Խորտակում» (ըստ Ա. Արաքսմանյանի «Վարդեր և արյուն» դրամայի): Դրանք տարբեր են իրենց բնույթով, կերպարային կառույցներով, ինչպես նաև երաժշտա-դրամատուրգիական դրսևորումներով: «Մարո»-ն լիրիկո-դրամատիկական տիպի օպերա է, «Խաչատուր Աբովյան»-ը պատմական, «Խորտակում»-ը պատմահերոսական: Օպերաներում գլխավոր կերպարների գործողություններից առավել կոմպոզիտորի ուշադրության կենտրոնում է նրանց հոգեկան աշխարհը, բարդ հոգբանական բախումները, ներքին զգացողությունների պայքարը և նրանց բուժումը:

Երեք օպերաներն էլ բեմադրվել են կոմպոզիտորի կյանքի օրոք: «Մարո»-ի առաջին բեմադրությունը կայացել է Թիֆլիսի միջնակարգ դպրոցներից մեկում՝ աշակերտական ջերմ ընդունելության միջավայրում:

«Խաչատուր Աբովյան» օպերան գրվել է 1953-1958 թթ.՝ որպես դիպլոմային աշխատանք, որը հաջողությամբ կատարվեց Երևանի ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի կողմից՝ Յուրի Դավթյանի ղեկավարությամբ, իսկ 1960թ. նոյեմբերի 25-ին մեծ դժվարություններից հետո՝ Երևանի օպերային թատրոնը բեմադրեց այն:

Լիբրետտոյի հեղինակներն են բանաստեղծ Արտաշես Պողոսյանը և կոմպոզիտորը: Ներկայացված է Խաչատուր Աբովյանի կյանքի վերջին՝ երևանյան տարիները: Այս օպերան թերևս առաջին խոշոր կտավի երաժշտական ստեղծագործությունն է՝ նվիրված հայ մեծ գրողին: Հասարակական գործիչ, արձակագիր, վիպագիր, դրամատուրգ, բանաստեղծ, ուսուցիչ, արևելահայ աշխարհաբար գրականության հիմնադիր Խ. Աբովյանի գործունեությամբ ձևավորված հայ գրականության զարգացման նոր փուլը, որտեղ գլխավոր*

* Վերջին շրջանի երևանյան տարիները ներառում են 1843-1848 թթ.: Այդ ժամանակահատվածում գրել է չափածո («Զգացմունք ցավալի սրտիս», «Գարուն», «Սեր առ հայրենիս»), արձակ («Պարապ վախտի խաղալիք», Թուրքի աղջիկը», «Առաջին սեր») գործեր, ինչպես նաև մի շարք ուսումնասիրություններ, դպրոցական ձեռնարկներ («Նախաշավիղ կրթության»):

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Ծովինար Հրայրի Մովսիսյանի
10. 11. 2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.11.2020 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 5.10.2020 թ.

հերոսը նման չէ նախորդներին, իր հետ բերեց հակասությունների մի շղթա: Ազգային գոյի խնդիրները, մշակույթը, ավանդույթները, մարդկային կյանքի առօրեան, ճակատագիրը լուսավորչի կյանքի վերջին շրջանում դարձան քննադատական հայացքների հիմնահարցերը:

Օպերան բաղկացած է 3 գործողությունից և 7 պատկերներից: Գործողությունների ծավալման կենտրոնը Խ. Աբովյանն է: Նա մտահոգված է ժողովրդի դառը կյանքից, ծանր հարկերի բողոքներից: Նրա միակ երազանքը դառնում է հայոց երկրի վրա լույս բացվելը (1-ին պատկեր) և ուխտ է անում կյանքը նվիրելու հայ ժողովրդին (2-րդ պատկեր): Այդ պատճառով ծնվում են հակամարտությունները, բախումները կառավարող շրջանների և հոգևորականության հետ (5-րդ և 7-րդ պատկերներ):

Օպերայում տեղ գտած մենախոսությունները, արիոզոները, երգերը, զուգերգ-երկխոսությունները, խմբերգերը, նրանցում կիրառված լայտմոտիվների և լայտթեմաների վառ մեղեդայնությունը վկայում են դասական օպերայի ավանդույթներին դիմելը:

«Խաչատուր Աբովյան»-ին պետք է հաջորդեր Լ. Շանթի «Հին Աստվածներ» ստեղծագործության հիման վրա գրված օպերան: Սակայն, Խորհրդային Հայաստանի պայմաններում դա արգելված թեմա էր և հանդիպեց բեմադրության խնդիրներով զբաղվող գործիչների ընդդիմությանը: Նրանք դա կապում էին տեքստի ոչ արդիական լինելու հետ:

Գ. Արմենյանը կազմելով լիբրետտոն, ներկայացնում է մշակույթի գործիչ Հակոբ Խանջյանին, որն էլ հավանության է արժանացնում, բայց խորհուրդ է տալիս չդիմել Լ. Շանթին: Մեջբերենք նրանց զրույցից մի հատված:

- Թույլ չեն տա, Շանթն արգելված է: Գուցե փորձես բալետ գրել:

Բայց զրույցի ընթացքում եկանք այն մտքին, որ այս նյութն առանց խոսքի չի կարող բացահայտվել:

-Արգելված է, արգելված չէ, գործ չունեմ: Գրում եմ և վերջ (1.):

Կոմպոզիտորին ամենևին չի անհանգստացնում երկի արգելված լինելը: Նա մտադրվում է ստեղծագործության անվանումը վերափոխել «Հին հայկական առասպելի»: Գրող, արձակագիր Սերո Խանզադյանը, ծանոթացնելով քաղաքական գործիչ, գրականագետ Նիկոլ Աղբալյանի՝ Լ. Շանթին նվիրված հոդվածի հետ, կրկին խորհուրդ է տալիս չդիմել այդ թեմային: Այս անգամ Գ. Արմենյանը որոշում է լուծել դրամատուրգիական մի կարևոր խնդիր: Հաշվի առնելով, որ երկի հերոսուհի Սեդան աբեղայի երևակայության արտացոլումն է, նա որոշում է կերպարը մեկնաբանել պարարվեստի միջոցներով՝ նվագախմբում պահպանելով նրա երգեցողությունը: Սա հնարավորություն կտար մեկ տեսարան ներկայացնել բալետի տեսքով: Սակայն որոշ ժամանակ անց կուլտուրայի նախարար Անդրանիկ Շահինյանը նրան առաջարկում է նախընտրած թեմայով գրել օպերա Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի առթիվ: Կոմպոզիտորը չհամաձայնվելով այդ առաջարկի հետ, ստանում է բացասական վերաբերմունք: Ա. Շահինյանը խոստանում է, որ այն չի բեմադրվի, եթե չի արտացոլում ժամանակակից թեմա:

Երկար մտորումներից հետո կոմպոզիտորը հրաժարվում է իր մտքից և արձակագիր, դրամատուրգ Ալեքսան Արաքսմանյանի խորհրդով գրում է ավելի ժամանակակից սյուժեով «Խորտակում» օպերան, իսկ տարիներ անց կրկին դիմում է «Հին աստվածներ» թեմային՝ գրելով վոկալ ցիկլ:

Առանձնացնենք այս ստեղծագործությունը, քանի որ այն ամփոփում է օպերային ժանրի ավանդույթների պահպանման, ստեղծագործական նոր որոնումների ձգտման ցայտուն դրսևորումները:

Այն ստեղծվել է ըստ՝ իր իսկ Ա. Արաքսմանյանի «Վարդեր և արյուն» դրամայի մոտիվների հիման վրա: Բոլոր շրջաններում էլ իրականությունն այդպես է թելադրել՝ քայլել ժամանակին ընդառաջ: Բայց կոմպոզիտորն այդքան էլ հեշտ չտրվեց նման մոտեցմամբ հասնելու օպերայի ապագա հաջողության ոգևորությանը: «Այս ձևով օպերա չի ստացվի: Առանց այն էլ օպերան ստատիկ լինելու տենդենց ունի, այս պիեսն այնքան ստատիկ է, որ չգիտեմ ինչպես կարելի է տեղից շարժել: Էլ չեմ ասում, որ ամենից ցայտունն ստացվել է բացասական կերպարը... Վերջում մնում է նրան արձան կանգնեցնել, շքանշան տալ և հանգիստ խղճով տուն գնալ»,- *իրեն հատուկ հումորով և երգիծանքի նուրբ երանգներով նշում է հեղինակը (1.): Յուրաքանչյուր դետալի մանրամասն ուսումնասիրության արդյունքում, նա, հիմնվեց դրամայի առանձին մոտիվների վրա. շեշտը դրվեց գործող անձանց հոգեկան ապրումների, անձնական ճակատագրերի ու դրանց զգացմունքների վրա և ստացավ «Խորտակում» անվանումը: Գ. Արմենյանի ճկուն մտքի հիանալի գաղափարի շնորհիվ ստեղծագործությունը սիրվեց բոլորի կողմից, որից հետո նրան վստահվեց օպերային թատրոնի տնօրենի պաշտոնը:*

Օպերան ավարտվեց և առաջին անգամ բեմադրվեց 1968 թ. հոկտեմբերի 6-ին Երևանի Ա. Սպենդիարյանի, իսկ չորս տարի անց՝ 1972 թ. դեկտեմբերի 12-ին Պերմի՝ Պ. Ի. Չայկովսկու անվան օպերային թատրոնում. հրատարակվեց կլավիրի տեսքով՝ 1982 թ.: Լիբրետտոն գրել է կոմպոզիտորը. գրական տեքստի մշակմանը մասնակցել է նաև բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը:

Այս շրջանում գոյություն ուներ առողջ քննադատություն և դրանք մեր օպերային թատրոնի լավագույն տարիներն էին: Բեմադրվում էին 50-ից ավելի ներկայացումներ, օպերան գտնվում էր հասարակության ուշադրության կենտրոնում ու համարվում էր մշակույթային օջախ: Պատահական չէ, որ արվեստագետների, երաժիշտների, բանաստեղծների, նկարիչների, ռեժիսյորների և այլ գործիչների նպատակը ծառայում էր մեկ գործողության և ինչ-որ կատարվում էր անմիջապես գտնում էր արձագանք, որը արժեվորում էր տվյալ երևույթը: Գ. Արմենյանի օպերան Ա. Տերտերյանի «Կրակե Օղակ»-ի կողքին համարվեց այդ շրջանում գրված արժեքավոր գործերից մեկը:

Կոմպոզիտորը շատ լավ գիտակցում էր օպերային դրամատուրգիայի խնդիրները, գործողությունների և

տեսարանների միջև կապը, դրանք մատուցում նորովի: Համաշխարհային և ազգային պրոֆեսիոնալ երաժշտարվեստում ունեցած ձեռքբերումների հիմքի վրա կառուցել նորը, սա է Գևորգ Արմենյանի ստեղծագործական հիմնական սկզբունքներից մեկը: Դրամատուրգիայի մասին փոքր ակնարկ ունեն նաև Մ. Հարությունյանը և Ա. Բարսամյանը իրենց՝ «Հայ երաժշտության պատմություն» գրքում՝ Արմենյանին նվիրված հատվածում (2. էջ 318): Որպես օպերային դրամատուրգիայի արդիական մտածողություն, հեղինակները, իրենց վերլուծականում ընդգծում են այս հատկանիշը:

«Խորտակում» օպերան կարելի է համարել պատմա-հերոսական հոգեբանական դրամա: Գործողությունները տեղի են ունենում Հայաստանի լեռներում՝ 1920 թ.:

Ստեղծագործության առանցքում քաղաքացիական կռիվների դժվարին ընթացքն է դրա հետևանքները հերոսների ճակատագրերում: Հեռվց մոտեցող գնացքի ընթացքը օպերայում ունի խորհրդանշական իմաստ: Գնացքի շարժը ցույց է տալիս գործողությունների անակնկալ կերպով արագ զարգացումը, որտեղ իրողությունները, կերպարները, հոգեկան ապրումները բացահայտվում են տեղում, առանց նախապատրաստման՝ հիշեցնելով ֆիլմի կադրային մտածողությունը: Այն նաև ներկայացնում է մոտեցող թշնամու վտանգը: Այս իմաստով ընտրված է դրամատուրգիայի կառուցման միջանկյալ զարգացման սկզբունքը՝ զերծ մասսայական տեսարաններից և հանդիսավորություններից: Հերոսներին միավորում է գնացքը՝ դառնալով բոլորի մտորումների և գործողությունների զարգացման հիմնական կենտրոնը, որի ստվերում բացահայտվում են նաև նրանց հարաբերությունները:

Ստեղծագործությունը բաղկացած է երկու գործողությունից՝ հինգ պատկերներով: Գործող անձինք են՝

Արփենիկ՝ դրամատիկ սոպրանո
Սահակ պապ՝ բարիտոն
Հերիքնազ, նրա կինը՝ մեձո-սոպրանո
Նազիկ, նրանց թոռնուհին՝ լիրիկական սոպրանո
Ենոք՝ բաս
Մանվել՝ դրամատիկ տենոր
Պարույր՝ լիրիկական տենոր
Պարտիզանններ

Կերպարները բացահայտվում են աստիճանաբար՝ տեսարանից տեսարան և կապվում իրենց բնորոշող լայտմոտիվների միջոցով: Ընթացքի լարվածությունը կանխորոշում է առաջին գործողության փոթորիկի տեսարանը, որը նվագախմբի հմուտ արտահայտչականությամբ պարբերաբար հնչում է օպերայի ընթացքում, միևնույն ժամանակ դառնալով Արփենիկի լայտմոտիվը: Սա հիշեցնում է Վագների «Տրիստան և Իզոլդա» օպերայի դրամատուրգիական սկզբունքները, որտեղ տիպիկ երաժշտական մոտիվ ունի ոչ միայն յուրաքանչյուր անհատ, այլ նաև տվյալ իրավիճակը ցույց տվող երևույթները (գիշեր, սիրո և այլ լայտմոտիվներ): Դրամատուրգիական նման կերպը սահմանափակում է նաև երգերի, արիաների, դուետների, անսամբլների ավարտուն լինելը և այն որոշ չափով մոտեցնում վերիստական օպերային: Դրանք հաճախ լրացվում են մենախոսություններով, արիոզոներով, արիա-բալլադով: Այստեղ հարկ է նշել երգչախմբի կիրառման կերպը: Սովորաբար այն ծառայում է մասսայական տեսարանների, ժողովրդի խոսքը ասելու, համընդհանուր գաղափար փոխանցելու համար: «Խորտակում» օպերայում նման անհրաժեշտություն չկա: Երգչախմբի ներմուծումը իմաստավորում է տվյալ իրավիճակի հուզական կողմը և ձայնաբաժիններում երգվող «Ա…» հնչյունները միայն բավական են տեսարանը տպավորիչ դարձնելու համար:

Որպես այդպիսին չկա գլխավոր, առաջնային գործող անձ, որը զգալի կերպով առանձնացվում է մյուսներից: Փոխարենը յուրաքանչյուրին տրվում է իրեն հատուկ նկարագիր. թերևս առանձնանում է Մանվելի կերպարը, որի լայտմոտիվն արտահայտում է գաղտնի, ինչ-որ թշնամամետ թաքուն արարք: Օպերայի առաջին հնչյուններից սկսած, Արփենիկի և Մանվելի՝ երկու հակադիր կողմերի ընտրությամբ, կոմպոզիտորը, հմտորեն ցույց է տվել գլխավոր կոնֆլիկտը: Արփենիկը և իր համախոհները (օպերայի մյուս հերոսները), որոնց թվում նաև Մանվելն է, փորձում են ամեն կերպ կանխել թշնամու գնացքի ընթացքը, իսկ Մանվելը նրանցից գաղտնի դիմում է հնարների՝ գործը խափանելու համար: Օպերայում նա պարբերաբար հանդես է գալիս գործող անձանց հետ երկխոսություններով, որտեղ նա տարբեր կերպերով փորձում է ներկայանալ որպես մյուսներին համախոհ: Այստեղից էլ բխում են նրա կեղծ խոսքերը: Նա իր սխալը ընդունում է միայն օպերայի վերջին պատկերում («Մեղավոր եմ ես» հատվածում, 2-րդ գործողություն 5-րդ պատկեր): Արփենիկը փնտրում է Ենոքին: Նրա անհանգիստ ինտոնացիաներով, լարված սեկունդային հարաբերակցությամբ հնչյուններով և հստակ ռիթմիկ պատկերով հագեցած լայտմոտիվը, դրան հաջորդող «Ախ, որտեղ եմ ես» խոսքերով, տերցիային և կվարտային ինտերվալային հիմք ունեցող, դեպի վեր ընթացող թեմային հակադրվում է Մանվելի՝ վերը նշված թեման: Գործողությունների հետագա զարգացման ընթացքում է պարզ դառնում, որ Արփենիկը և Մանվելը ամուսիններ են: Կոմպոզիտորի հիանալի մտահղացմամբ նրանք վալսի ներքո հիշում են իրենց լուսավոր անցյալը (1-ին գործողություն՝ 3-րդ պատկեր): Մեկ ակնթարթ մոռացվում է մութ, լարված, դեռ չպարզաբանված իրականությունը և մթնոլորտը պարուրում առանձնակի ջերմությամբ, որով և ավարտվում է 1-ին գործողությունը: Սակայն Մանվելի արարքը, այնուհետև Սահակ պապի սպանությունը փոխում են երբեմնի ջերմ սիրո խոստովանություններով լի մթնոլորտը և օպերայի զարգացման ուղղությունը հասցնում ողբերգական ավարտի, քանի որ հենց Արփենիկն էլ սպանում է Մանվելին:

Օպերայի մյուս զույգը Պարույրն ու Նազիկն են: 2-րդ գործողությունն սկսվում է նրանց զուգերգով, որտեղ Նազիկը խնդրում է սիրելիին չթողնել իրեն և պատրաստ է գնալու նրա հետ: Նազիկին բնութագրող մեղեդին ցույց է տալիս երիտասարդ աղջկա աշխույժ, ժիր էությունը: Զուգերգը ծավալվում է պոլիֆոնիկ շարադ-

րանքով. ձայները լրացնում են միմյանց իմիտացիոն հնարքներով՝ հատվածաբար միանալով վերածվում հոմոֆոն գրելաոճի՝ զուգահեռ տերցիաներով քայլերի: Փոխարենը երկի ամբողջ արտահայտչականությունն իր վրա վերցրած նվագախումբը տալիս է հստակ ռիթմիկ ու հարմոնիկ բնորոշում: Նրանց միաձուլումն ընդհանուր հնչողությանը հաղորդում է ինքնօրինակ գունային երանգ: Հետաքրքիր է Արմենյանի ընտրությունը զուգերգերի երաժշտական կառույցի հարցում: Սկզբում, երբ կերպարները (այստեղ Նազիկն ու Պարույրը) հակադրվում են իրենց կարծիքներով, խոսքային հատվածում հանդես են գալիս միաժամանակ տարբեր ասելիքներով: Իսկ, երբ գալիս են փոխհամաձայնության, ասելիքը դառնում է նույնը, երաժշտականորեն արտահայտվում ունիսոն երգեցողությամբ:

Իրողությունների, գործողությունների ճշմարտացիորեն վերակերտումը երաժշտական հնչյունների միջոցով, առանց ավելորդ հնարների, խոսում են Գ. Արմենյանի կյանքի գլխավոր հատկանիշներից մեկի՝ նրբանկատության առկայության մասին: Նազիկի կերպարը ևս ունենում է ողբերգական ավարտ: Նրան սպանում է Մանվելը: Պարույրի և Նազիկի զուգերգը ամենագեղեցիկ, հուզիչ հատվածներից մեկն է օպերայում:

*Օպերայի դրամատուրգիայի զարգացման գործում առանձնահատուկ դեր է խաղում Սահակ պապի կերպարը: Նրա կարևորությունը նկատվում է սկսած առաջին գործողությունից, որի նախաբանում արդեն հնչում են թեմայից իմտոնացիաներ: Թեման վերածվելով լայտմոտիվի, տարբեր երանգներով է հնչում նրա ապրումներն ընդգծող բալլադ-արիայում [2-րդ գործողություն՝ 4-րդ տեսարան՝ «Դու մահացար կռունկ իմ» (“**Ты погиб, журавлик мой**”)], մահվան տեսարանում (4-րդ տեսարանի ֆինալ): Գ. Գյոդակյանը իր հոդվածում անդրադառնալով Սահակ պապի կերպարի զարգացմանը, վեր է հանում այն հարցը, թե ինչու մահացու վիրավորված պապը չի տալիս մարդասպանի անունը: Սա կարելի է մեկնաբանել, ելնելով գործողության ընթացքից և նրա տաքարյուն բնավորության հատկանիշներից: Մանվելը նրան վիրավորել է այն ժամանակ, երբ դեռ գնացքը չի հայտնվել: Կորցնելով գիտակցությունը՝ պապը, կատարվածի մասին անտեղյակ է և գալով գիտակցության, փորձում է հասկանալ իրավիճակը՝ անընդհատ կրկնելով՝ «…ինչու սպանվեց դժբախտ կռունկը»:*

Տիպիկ հայ կնոջ հատկանիշներով է օժտված Սահակ պապի կինը՝ Հերիքնազը: Նրա հայկական ժողովրդական իմտոնացիաներով հագեցված թեման ցույց է տալիս նրա հայեցի էությունը, հոգատարությունը, անհանգստությունը, որը ամբողջությամբ արտահայտվում է վոկալ երգամասում՝ նվագախումբը մղելով երկրորդ պլան:

Դեռևս Ենոքի կերպարն է մնում անավարտ: Նրա մասին տեղեկանում ենք առաջին գործողության մեջ: Կնոջը կորցրած անձնավորություն, ով ագնիվ է և չի համաձայնում Մանվելի՝ իրեն միանալու առաջարկներին: Սակայն օպերայի վերջում նրա կերպարի ամբողջական լուծում չի տրվում:

Ընտրված գործողությունների հնարքները, կերպարների անհատական մոտեցումները եզրակացնում են, որ հերոսները բոլորն էլ բարձր արժանիքների տեր անձնավորություններ են, բայց դարձել են իրականության զոհ:

Նվագախումբը ինչպես նշվեց, զգալի դեր է խաղում ստեղծագործության մեջ: Այն իր վրա է կրում ամբողջ օպերայի ընդհանուր զարգացման, գործողությունների, պատկերների, իրար հաջորդող համարների միջև կապի ձևավորումը: Առանձին նվագախմբային հատվածներ սակավ են հանդիպում: Տպավորիչ է օպերայի բարձրակետը հանդիսացող տեսարանի նկարագրությունը, որը ստացել է «խորտակում» անվանումը: Առաջին անգամ նվագախմբի tutti-ին միանում են բոլոր գործող անձինք, որտեղ երկի գլխավոր հանգույցն է:

Հիանալի է մտածված մեղեդիների ոճային առանձնահատկությունները, որտեղ վարպետությամբ համադրված են համաշխարհային դասական երգարվեստի երաժշտա-ոճական, ժողովրդական իմտոնացիաներից բխող տարրերը: Նույն կերպ է մտածված նաև լադա-հարմոնիկ կառույցը: Կերպարների բնութագրման քնարական հատվածներում կոմպոզիտորը նշում է հստակ տոնայնություն, մյուս դեպքերում տալիս լադա-հարմոնիկ համակարգի ազատ մեկնաբանություն:

Գևորգ Արմենյանի «Խորտակում» օպերան XX դարի երկրորդ կեսի հայ օպերային արվեստի համատեքստում ուրույն տեղը գրավեց, որպես ավանդականի և նորարարականի հետաքրքիր լուծման օրինակ: Դրանում դրսևորվել է հեղինակի ունակությունն ստեղծելու հերոսների հոգեբանական կերպարները: Դրանք ոչ թե ստատիկ, այլ պատրաստի զարգացող կերպարներ են, որոնք օպերայի ընթացքում տարբեր հանգամանքներից ելնելով անընդհատ փոփոխվում են: Նրանց անհատական կողմերը բացահայտվում են օպերայում տեղ գտած մեներգերի, զուգերքերի, արիոզոների միջոցով:

Այսպիսով՝ թեև Գ. Արմենյանի երկացանկում օպերաները կազմում են քիչ քանակ, սակայն տալիս են լիարժեք պատկերացում կոմպոզիտորի մտքերի, հայացքների ներքին կուտակումների մասին, առաջարկում դրանց լուծման իրական տարբերակներ: Ողբերգությունը առաջ բերելով ընդգծում է երջանկության կարևորությունը և այդ տեսանկյունից օպերաների ավարտը իր մեջ նշմարում է հեռվում շողացող լավատեսությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. *Արմենյան Գ., Հուշագրություններ, անձնական արխիվ: Armenyan G., Hushagruthyunner, andzhnakan arkhiv.*
2. *Հարությունյան Մ. Գ., Բարսամյան Ա. Ա.,* Հայ երաժշտության պատմություն, Եր., 1996 թ.: *Haruthyunyan M. G., Hushagruthyunner,* Hay yerazhshtuthyan patmuthyun, Yer., 1996 th.

Բանալի բառեր. *օպերա, դրամատուրգիա, լիբրետո, ավանդական, նորարարական, լավատեսություն:*

Ключевые слава: *опера, драматургия, либретто, традиционный, новаторский, оптимизм.*

Key words: *opera, dramaturgy, libretto, traditional, innovative, optimism.*

Տեղեկություններ հեղինակի մասին. *ԱՐՄԵՆՈՒՀԻ ԲԱԲԼՈՅԱՆ ԱՐՄԵՆԱԿԻ (ծ. 18. 01. 1988 թ., Արտաշատ), երաժշտագետ: 2008 թ. ավարտել է Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջը: 2008-2014 թթ. սովորել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտագիտության բաժինը (դոց. Ծ. Հ. Մովսիսյանի մասնագիտական դասարան): 2015 թ. առ այսօր հանդիսանում է Արվեստի ինստիտուտի հայցորդ: 2014-2016 թթ. աշխատել է Արմավիրի արվեստի պետական քոլեջում, 2016-2020 թթ. Երևանի ջազային և էստրադային արվեստի պետական քոլեջում՝ որպես երաժշտա-տեսական առարկաների դասախոս: 2020 թ. առ այսօր աշխատում է Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջում, Երևանի Ա. Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջում՝ որպես երաժշտա-տեսական առարկաների դասախոս: Հեղինակ է մի շարք հոդվածների որոնց թվում են՝ Գևորգ Արմենյանի «Վարպետի սիրտը» կանտատը (Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական XI նստաշրջանի նյութեր. Երևան 2017 թ.), Գևորգ Արմենյանի «Խորտակում» օպերան (Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական XII նստաշրջանի նյութեր, Երևան 2018 թ.), Слово о великом мастере (Научные вести N 1 (13), 2019 թ.) և այլն:

Сведения об авторе: *БАБЛОЯН АРМЕНУИ АРМЕНАКОВНА (род. 18 января 1988 года, Арташат), музыковед. Окончила: Ереванский музыкально-педагогический колледж имени Арно Бабаджаняна (2008), факультет музыкаведения ЕГК имени Комитаса (класс доц. Ц.Г. Мовсисян, 2015). Работала: в Армавирском государственном колледже искусств (2014 по 2016,); в Ереванском государственном колледже джаза и эстрадного искусства в качестве преподавателя теоретических предметов (2016 по 2020); в Ереванском государственном колледже культуры и искусств (с 2020), Ереванском музыкально-педагогическом колледже имени Арно Бабаджаняна, является научным сотрудником Института искусств Академии наук (с 2015). Автор ряда музыковедческих статей, в том числе: Кантата “Сердце мастера” Геворга Арменяна (Материалы одиннадцатой научной сессии молодых армянских искусствоведов, Ереван 2017), Опера “Крушение” Геворга Арменяна (Материалы двенадцатой научной сессии молодых армянских искусствоведов, Ереван 2018), Слово о великом мастере (/ /Научные вести N 8(13), 2019) и т.д.*

Information about the author: *ARMENUHI ARMENAK BABLOYAN (born 18.01.1988, Artashat) musicologist. In 2008 graduated Yerevan state music-pedagogical college after Arno Babajanyan. From 2008-2014 studied in Yerevan state conservatory after Komitas. From 2015-now is an applicant of Art Institute. From 2014-2016 worked in state art college of Armavir. From 2016-2020 worked in Yerevan state jazz and estrada art college. From 2020 now works in Yerevan state college of culture and art, and Yerevan state musical-pedagogical college after A. Babajanyan as a professor of music theory subjects. An author of a number of articles including: Gevorg Armenyan's "The heart of the master" cantata (Materials of eleventh scientific session art critics, Erevan 2017), Gevorg Armenyan's "Crash" opera (Materials of twelve scientific session art critics, Erevan 2018), "A word about the great master" ("Scientific news" № 8(13), 2019) etc.*

Резюме

Музыковед, соискатель Института искусств НАН РА, преподаватель Ереванского колледжа искусства и культуры и музыкально-педагогического колледжа имени А.Бабаджаняна, ***Арменуи Арменаковна Баблоян. -“Оперное творчество Геворга Арменяна”.***

В статье представлено оперное творчество композитора, народного артиста Армянской ССР Геворга Арменяна. Выделяя оперы композитора, автор останавливается на истории их создания, выбранной теме, идее (в частности, опера по мотивам «Древних богов» Л. Шанта) и постановке.

Из трех опер была подробно разобрана опера «Крушение» по мотивам драмы Араксманяна «Розы и кровь». Данная опера представляет цобой интересный пример армянской оперы второй половины XX века, синтезирующей традиции и новаторство.

Summary

Musicologist, postgraduate student at the NAS of the RA, lecturer at the Yerevan College of Arts and Music, lecturer at the A. Babadjanyan Music and Pedagogical College ***Armenuhi Armenak Babloyan.-“The opera art of Gevorg Armenyan”.***

The article presents the opera art of composer, People's Artist of the Armenia Gevorg Armenyan. Separating the operas from the composer's repertoire, the author dwells on the history of their creation, the chosen theme, the content's barriers to the idea (in particular, the opera based on L. Shant's "Old Gods") and the staging. Of the three operas, the opera "Sinking" based on the drama of Araksmanyan "Blood of Roses" was analyzed in detail, since it summarizes the obvious manifestations of the preservation of the traditions of the genre and the desire for new creative searches.